14. 07. 2020 թ. ք. Գյումրի ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ

# ՈՐՈՇՈՒՄ Թիվ 694

## ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՒՄԱՅՐԻԻ ԲԱԺՆԻ ԹԻՎ 227 ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ՝ Սասուն Ժորայի Աբաղյանս, վերանայելով ՀՀ ոստիկանության Կումայրիի բաժնի պետի կողմից **16. 04. 2020 թ.**կայացված թիվ **227** որոշումը, պարզեցի, որ.

Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, 144/145 տնակի բնակիչ՝ Հովհաննես Արմենի Մխիթարյանը

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 10-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ նշանակվել է տուգանք 100.000 ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին>> 2020 թվականի մայիսի 19-ի թիվ ՀՕ-265-Ն օրենքի 2-րդ հոդվածը և առաջնորդվելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 67-րդ հոդվածով՝

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Վերանայել **Հովհաննես Արմենի Մխիթարյանի** նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 10-րդ մասով կիրառված տույժը՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով նշանակված տուգանքը, փոխարենը կիրառելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված տույժը՝ սահմանված նվազագույն աշխատավարձի [illegible] չափով տուգանքը (10.000 ՀՀ դրամ):

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործը քննարկած մարմնի կայացրած վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկվել (բողոքարկվել) սույն օրենսգրքով սահմանված վարչական կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով:*

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 288 հոդվածով սահմանված կարգով վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում:*

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝
Կ.Տ.

Ս. Ժ. ԱԲԱՂՅԱՆ